# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԽՏԸ ՄԱՇՏՈՑԻ ՇԻՐՄԻՆ

Նոյեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր անդրանիկ ուխտագնացությունը կատարեց Օշական՝ Հայոց Մեծ ուսուցչապետ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին:

Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու բակում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, բազմաթիվ օշականցիներ, գյուղի մանուկներն ու դպրոցականները, որոնք եկել էին ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

**«Հոգու պարտք էր Մեզ համար այցելել այս նվիրական Ս. Եկեղեցին, որի կամարների ներքո հանգչում է մեր մեծ վարդապետը: Եկանք վերանորոգելու մեր ուխտը, խոնարհվելու շիրիմի առաջ, Մեր շուրթերով հպվելու իր խորհրդին և իր օրհնությունը հայցելու Մեր գործունեության, հայրապետական Մեր գահակալության ողջ ընթացքի համար»**,- ասաց Նորին Սրբությունը:

Ողջունելով և իր օրհնությունը բաշխելով գյուղի երեխաներին, Վեհափառ Հայրապետը պատգամեց նրանց սրբորեն պահպանել մաշտոցյան լեզուն, առաջնորդվել դեպի հարատևություն տանող մաշտոցյան ոգով ու մեծ ուսուցչի պարգևած «հոգու և մտքի աչքերով»:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատուն, որտեղ գրառումների մատյանում թողեց հայրապետական իր մաղթանքը. «Թ-ող մաշտոցյան օրհնության առատաբուխ աղբյուր լինի մեր ժողովրդի համար այս դպրատունը»:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*